

Կ-068-22.03.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2.** Կառավարության կազմը եւ կառուցվածքը

1. Կառավարությունը կազմված է վարչապետից, երկու փոխվարչապետներից եւ նախարարներից:

2. Կառավարության կառուցվածքում ընդգրկվում են հետեւյալ նախարարությունները.

1) աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը,

2) առողջապահության նախարարությունը,

3) արդարադատության նախարարությունը,

4) արտակարգ իրավիճակների նախարարությունը,

5) արտաքին գործերի նախարարությունը,

6) կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը,

7) շրջակա միջավայրի նախարարությունը,

8) պաշտպանության նախարարությունը,

9) տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը,

10) բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը,

11) Էկոնոմիկայի նախարարությունը,

12) ֆինանսների նախարարությունը:

3. Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները սահմանվում են սույն օրենքի հավելվածում:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «առաջին փոխվարչապետի,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) լրացնել 5.1-ին մաս՝ հետեւյալ խմբագրությամբ.

«5.1. Վարչապետի որոշումները ստորագրում է վարչապետը: Վարչապետի որոշման հավելվածը ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը հանդիսանում է վարչապետի կողմից ընդունված տարբերակը:»:

2) 12-րդ մասի «առաջին փոխվարչապետի կողմից» բառերը փոխարինել «փոխվարչապետներից մեկի կողմից» բառերով, իսկ «փոխարինող առաջին» բառերը փոխարինել «փոխարինող» բառով:

3) 13-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել 4.1-ին մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Փոխվարչապետի որոշումները, ինչպես նաև դրանց հավելվածները ստորագրում է փոխվարչապետը:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 13-րդ մասի «ղեկավարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի ղեկավարը» բառերով,

2) 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կառավարության նիստերը դմբաց են՝ բացառությամբ վարչապետի պատճառաբանված որոշմամբ նիստը կամ դրա մի մասը դմբակակ անցկացնելու դեպքերի:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Կառավարության որոշման հավելվածը ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը հանդիսանում է Կառավարության նիստում ընդունված տարբերակը:»:

Հոդված 7. Օրենքի հավելվածի 6-րդ մասի ամբողջ տեքստում «բնապահպանության» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով:

Հոդված 8. Օրենքի հավելվածի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ եւ 13-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի հավելվածի 9-րդ մասում «Կրթության եւ գիտության» բառերը փոխարինել «Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի» բառերով, «ոլորտներում» բառից առաջ լրացնել «, մշակույթի զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, օգտագործման, հանրահրչակման, հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի գիտակցման, նոր արժեքների ու նոր գաղափարների ներդրման, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման ու զարգացման համար պայմանների ստեղծման, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի ոլորտում ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմանների ապահովման» բառերը, իսկ «քաղաքականությունը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի հարցերի, բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական դաստիարակության համակարգի ստեղծման, մարզիկների պատրաստման, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի եւ մարզիկների մասնակցության, սպորտի բնագավառում գիտամեթոդական ու վերլուծական աշխատանքների իրականացման, ծրագրերի համադասման ապահովման, երիտասարդության ներուժի իրացման եւ զարգացման համար արդյունավետ մեխանիզմների մշակման եւ կիրառման, երիտասարդների մասնակցային գործընթացների խթանման, հոգեւոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, հայրենասիրական դաստիարակության, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված Կառավարության քաղաքականությունը» բառերը:

Հոդված 10. Օրենքի հավելվածի 11-րդ մասից հանել «ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման,» բառերը:

Հոդված 11. Օրենքի հավելվածի 14-րդ մասում «Տարածքային կառավարման եւ զարգացման» բառերը փոխարինել «Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների» բառերով, «ոլորտներում» բառից առաջ լրացնել հետևյալ բառերը. «տրանսպորտի, լիցենզավորման եւ թույլտվությունների տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ձեւավորման, էներգետիկայի, ընդերքօգտագործման եւ ընդերքի պահպանության բնագավառների, միջուկային էներգետիկայի, վերականգնվող էներգետիկայի, էներգետիկայի

բնագավառում եւ էներգասպառման ոլորտում անվտանգության ապահովման, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության, էներգախնայողության եւ էներգաարդյունավետության զարգացմանը եւ ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործմանը նպաստելուն ուղղված, երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման եւ տնօրինման, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման եւ անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման, պետական գույքի կառավարման» բառերը:

Հոդված 12. Օրենքի հավելվածի 15-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15. Էկոնոմիկայի նախարարությունը մշակում եւ իրականացնում է տնտեսության ճյուղերի, այդ թվում՝ արդյունաբերության մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, արտաքին առևտրի խթանման, արտահանման շուկաների հասանելիության ապահովման եւ արտահանման զարգացման, ներդրումների խթանման, պետություն-մասնավոր գործընկերության զարգացման, ձեռնարկատիրության խթանման, փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման, զբոսաշրջության, մտավոր սեփականության պաշտպանության, տարածքային տնտեսական զարգացման, մրցակցային պայմանների բարելավման, որակի ենթակառուցվածքների զարգացման, սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացման, բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, անասնաբուծության, բուսասանիտարիայի, պարենային անվտանգության, սննդամթերքի անվտանգության, գիտատեխնիկական ապահովման եւ խորհրդատվության, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, գյուղատնտեսական հողերի մոնիտորինգի, արդյունավետ օգտագործման, մելիորատիվ վիճակի բարելավման ու պահպանման եւ գյուղատնտեսությանը պետական աջակցության ոլորտներում կառավարության քաղաքականությունը:»

Հոդված 13. Օրենքի հավելվածի 16-րդ մասում «Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը փոխարինել «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության» բառերով, միաժամանակ «տրանսպորտի», «տրանսպորտի եւ», «Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ձեւավորման», բառերը հանել, իսկ «թվային» բառից առաջ լրացնել «ռազմարդյունաբերության, ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման, ռազմարդյունաբերական միջազգային համագործակցության իրականացման և զարգացման, ռադիոհաձայնակալությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների արդյունավետ օգտագործման և կառավարման, նորարարության ձեւավորման խթանման, ինովացիոն և բարձր տեխնոլոգիաների, կիբեռանվտանգության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և» բառերը:

Հոդված 14.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարությունն ու Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը միաձուլման ձեւով վերակազմակերպել՝ ստեղծելով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն:

3. Մշակույթի նախարարությունը, Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունն ու Կրթության եւ գիտության նախարարությունը միաձուլման ձեւով վերակազմակերպել՝ ստեղծելով Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն:

4. Գյուղատնտեսության նախարարությունն ու Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունը միաձուլման ձեւով վերակազմակերպել՝ ստեղծելով Էկոնոմիկայի նախարարություն:

5. Սփյուռքի նախարարությունը միացման ձեւով վերակազմակերպել՝ միացնելով Վարչապետի աշխատակազմին՝ Վարչապետի աշխատակազմում ստեղծելով Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ, որի նպատակներն ու խնդիրներն են Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի լիազորությունների իրականացման մասնագիտական օժանդակությունը եւ անհրաժեշտ աջակցությունը, Վարչապետի կողմից սփյուռքի հետ կապված քաղաքականության ապահովման եւ սփյուռքի հետ տարվող աշխատանքների միասնականության ապահովման գործառույթների եւ դրա շրջանակներում Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի կողմից իրականացվող աշխատանքների կատարման աջակցությունը? Սփյուռքի գործերի գլխավոր

հանձնակատարին վերապահվում է վարչապետի՝ սփյուռքի հետ կապված քաղաքականության ապահովման եւ սփյուռքի հետ տարվող աշխատանքների միասնականության ապահովման լիազորությունների իրականացման աշխատանքների կազմակերպումը (այդ թվում՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի միջոցով), որի շրջանակներում իրականացվող գործառույթները սահմանում է վարչապետը:

6. Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը անվանափոխել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

7. Բնապահպանության նախարարությունը անվանափոխել Շրջակա միջավայրի նախարարություն:

8. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, հաստատվում են սույն օրենքով վերակազմակերպված պետական կառավարման համակարգի մարմինների նոր կանոնադրությունները եւ կատարվում են սույն օրենքի ընդունումից բխող այլ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ:

9. Սույն հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված միաձուլվող եւ միացվող պետական կառավարման համակարգի մարմինները դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ իրավունքներն ու պարտավորությունները փոխանցվում են համապատասխան նոր ստեղծված պետական կառավարման համակարգի մարմիններին եւ վարչապետի աշխատակազմին՝ համապատասխանաբար վերակազմակերպված պետական կառավարման համակարգի մարմինների եւ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կանոնադրությունները հաստատելու մասին համապատասխան իրավական ակտով սահմանված ժամկետներում:

Հոդված 15.

1. Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը վերապահված տրանսպորտի, լիցենզավորման եւ թույլտվությունների տրամադրման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի ձեւավորման ոլորտները Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը վերապահելուց եւ այդ նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության այն քաղաքացիական ծառայողները, որոնց գործունեությունը կապված է սույն մասում նշված ոլորտների հետ, առանց մրցույթի եւ վերջնահաշվարկի նշանակվում են Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հավասարազոր կամ ավելի ցածր քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ իրենց համաձայնությամբ, իսկ մինչեւ վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոն զբաղեցվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում պահպանվում եւ հաշվի են առնվում քաղաքացիական ծառայողների նկատմամբ նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, աշխատանքի չներկայանալու ժամկետները:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱԴԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՌՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԹՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-068-22.03.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Կառավարության կազմը եւ կառուցվածքը

1. Կառավարությունը կազմված է վարչապետից, երկու փոխվարչապետներից եւ նախարարներից:

2. Կառավարության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ նախարարությունները.

1) աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը,

2) առողջապահության նախարարությունը,

3) արդարադատության նախարարությունը,

4) արտակարգ իրավիճակների նախարարությունը,

5) արտաքին գործերի նախարարությունը,

6) կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը,

7) շրջակա միջավայրի նախարարությունը,

8) պաշտպանության նախարարությունը,

9) տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը,

10) բարձր [տեխնոլոգիական տեխնոլոգիաների](#) արդյունաբերության նախարարությունը,

11) Էկոնոմիկայի նախարարությունը,

12) ֆինանսների նախարարությունը:

3. Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները սահմանվում են սույն օրենքի հավելվածում:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «ամառային փոխվարչապետի,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում`

1) լրացնել 5.1-ին մաս` հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Վարչապետի որոշումները ստորագրում է վարչապետը: Վարչապետի որոշման հավելվածը ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը` դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը հանդիսանում է վարչապետի կողմից ընդունված տարբերակը:»:

2) 12-րդ մասի «ամառային փոխվարչապետի կողմից» բառերը փոխարինել «փոխվարչապետներից մեկի կողմից» բառերով, իսկ «փոխարինող ամառային» բառերը փոխարինել «փոխարինող» բառով.

3) 13-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել 4.1-ին մասով` հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Փոխվարչապետի որոշումները, ինչպես նաև դրանց հավելվածները ստորագրում է փոխվարչապետը:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի`

1) 13-րդ մասի «ղեկավարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի ղեկավարը» բառերով,

2) 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ~~մասի «նիստի» բառը փոխարինել «նիստն ամբողջությամբ կամ դրա» բառերով~~

«Կառավարության նիստերը դնրբաց են` բազառությամբ վարչապետի պատճառաբանված որոշմամբ նիստը կամ դրա մի մասը դննկակ անցկացնելու դեպքերի:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ` հետևյալ խմբագրությամբ.

«Կառավարության որոշման հավելվածը ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը` դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը հանդիսանում է Կառավարության նիստում ընդունված տարբերակը:»:

Հոդված 7. Օրենքի հավելվածի 6-րդ մասի ամբողջ տեքստում «բնապահպանության» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով:

Հոդված 8. Օրենքի հավելվածի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ եւ 13-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի հավելվածի 9-րդ մասում «Կրթության եւ գիտության» բառերը փոխարինել «Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի» բառերով, «ոլորտներում» բառից առաջ լրացնել «, մշակույթի զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, օգտագործման, հանրահրչակման, հասարակության կողմից մշակույթի` որպես զարգացման միջոցի գիտակցման, նոր արժեքների ու նոր գաղափարների ներդրման, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման ու զարգացման համար պայմանների ստեղծման, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի ոլորտում ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմանների ապահովման» բառերը, իսկ «քաղաքականությունը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի հարցերի, բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական դաստիարակության համակարգի ստեղծման, մարզիկների պատրաստման, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի եւ մարզիկների մասնակցության, սպորտի բնագավառում գիտամեթոդական ու վերլուծական աշխատանքների իրականացման, ծրագրերի համադասման ապահովման, երիտասարդության

ներուծի իրացման եւ զարգացման համար արդյունավետ մեխանիզմների մշակման եւ կիրառման, երիտասարդների մասնակցային գործընթացների խթանման, հոգեւոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, հայրենասիրական դաստիարակության, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված Կառավարության քաղաքականությունը» բառերը:

Հոդված 10. Օրենքի հավելվածի 11-րդ մասից հանել «ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման,» բառերը:

Հոդված 11. Օրենքի հավելվածի 14-րդ մասում «Տարածքային կառավարման եւ զարգացման» բառերը փոխարինել «Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների» բառերով, «ուլորտներում» բառից առաջ լրացնել հետեւյալ բառերը. «տրանսպորտի, լիցենզավորման եւ թույլտվությունների տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ձեւավորման, էներգետիկայի, ընդերքօգտագործման եւ ընդերքի պահպանության բնագավառների, միջուկային էներգետիկայի, վերականգնվող էներգետիկայի, էներգետիկայի բնագավառում եւ էներգասպառման ոլորտում անվտանգության ապահովման, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության, էներգախնայողության եւ էներգաարդյունավետության զարգացմանը եւ ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործմանը նպաստելուն ուղղված, երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման եւ տնօրինման, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման եւ անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման, պետական գույքի կառավարման» բառերը:

Հոդված 12. Օրենքի հավելվածի 15-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15. Էկոնոմիկայի նախարարությունը մշակում եւ իրականացնում է տնտեսության ճյուղերի, այդ թվում՝ արդյունաբերության մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, արտաքին առեւտրի խթանման, արտահանման շուկաների հասանելիության ապահովման եւ արտահանման զարգացման, ներդրումների խթանման, պետություն-մասնավոր գործընկերության զարգացման, ձեռնարկատիրության խթանման, փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման, զբոսաշրջության, մտավոր սեփականության պաշտպանության, տարածքային տնտեսական զարգացման, մրցակցային պայմանների բարելավման, որակի ենթակառուցվածքների զարգացման, սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացման, բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, անասնաբուծության, բուսասանիտարիայի, պարենային անվտանգության, սննդամթերքի անվտանգության, գիտատեխնիկական ապահովման եւ խորհրդատվության, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, գյուղատնտեսական հողերի մոնիտորինգի, արդյունավետ օգտագործման, մելիորատիվ վիճակի բարելավման ու պահպանման եւ գյուղատնտեսությանը պետական աջակցության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:»

Հոդված 13. Օրենքի հավելվածի 16-րդ մասում «Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը փոխարինել «Բարձր [տեխնոլոգիական տեխնոլոգիաների](#) արդյունաբերության» բառերով, միաժամանակ «տրանսպորտի,», «տրանսպորտի եւ», «Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ձեւավորման,» բառերը հանել, իսկ «թվային» բառից առաջ լրացնել [«ռազմարդյունաբերության, ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման, ռազմարդյունաբերական միջազգային համագործակցության իրականացման և զարգացման, ռադիոհաձայնակալությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների արդյունավետ օգտագործման և կառավարման, նորարարության ձեւավորման խթանման, ինովացիոն և բարձր տեխնոլոգիաների, կիբեռանվտանգության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և»](#) ~~ռազմարդյունաբերության, — ռազմարդյունաբերական — համալիրի, սպառազինության — եւ — ռազմական — տեխնիկայի — զարգացման — ապահովման, — թվայնացման գործընթացների համակարգման, — միասնական թվայնացված — միջավայրի եւ:~~ բառերը:

Հոդված 14.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարությունն ու Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը միաձուլման ձեւով վերակազմակերպել՝ ստեղծելով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն:

3. Մշակույթի նախարարությունը, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն ու Կրթության և գիտության նախարարությունը միաձուլման ձեռով վերակազմակերպել՝ ստեղծելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

4. Գյուղատնտեսության նախարարությունն ու Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը միաձուլման ձեռով վերակազմակերպել՝ ստեղծելով Էկոնոմիկայի նախարարություն:

5. Սփյուռքի նախարարությունը միացման ձեռով վերակազմակերպել՝ միացնելով Վարչապետի աշխատակազմին՝ Վարչապետի աշխատակազմում ստեղծելով Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ, որի նպատակներն ու խնդիրներն են Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի լիազորությունների իրականացման մասնագիտական օժանդակությունը և անհրաժեշտ աջակցությունը, Վարչապետի կողմից սփյուռքի հետ կապված քաղաքականության ապահովման և սփյուռքի հետ տարվող աշխատանքների միասնականության ապահովման գործառույթների և դրա շրջանակներում Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի կողմից իրականացվող աշխատանքների կատարման աջակցությունը? Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին վերապահվում է վարչապետի՝ սփյուռքի հետ կապված քաղաքականության ապահովման և սփյուռքի հետ տարվող աշխատանքների միասնականության ապահովման լիազորությունների իրականացման աշխատանքների կազմակերպումը (այդ թվում՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի միջոցով), որի շրջանակներում իրականացվող գործառույթները սահմանում է վարչապետը:

6. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը անվանափոխել Բարձր [տեխնոլոգիական տեխնոլոգիաների](#) արդյունաբերության նախարարություն:

7. Բնապահպանության նախարարությունը անվանափոխել Շրջակա միջավայրի նախարարություն:

8. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, հաստատվում են սույն օրենքով վերակազմակերպված պետական կառավարման համակարգի մարմինների նոր կանոնադրությունները և կատարվում են սույն օրենքի ընդունումից թխող այլ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ:

9. Սույն հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված միաձուլվող և միացվող պետական կառավարման համակարգի մարմինները դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ իրավունքներն ու պարտավորությունները փոխանցվում են համապատասխան նոր ստեղծված պետական կառավարման համակարգի մարմիններին և վարչապետի աշխատակազմին՝ համապատասխանաբար վերակազմակերպված պետական կառավարման համակարգի մարմինների և Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կանոնադրությունները հաստատելու մասին համապատասխան իրավական ակտով սահմանված ժամկետներում:

Հոդված 15.

1. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը վերապահված տրանսպորտի, լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի ձեւավորման ոլորտները Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահելուց և այդ նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության այն քաղաքացիական ծառայողները, որոնց գործունեությունը կապված է սույն մասում նշված ոլորտների հետ, առանց մրցույթի և վերջնահաշվարկի նշանակվում են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հավասարազոր կամ ավելի ցածր քաղաքացիական ծառայության պաշտոններում իրենց համաձայնությամբ, իսկ մինչեւ վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոն զբաղեցվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում պահպանվում և հաշվի են առնվում քաղաքացիական ծառայողների նկատմամբ նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, աշխատանքի չներկայանալու ժամկետները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԱՇՏՈՆՆԱՍԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԵՒԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-068-22.03.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ (Կ-068-22.03.2019-ՊԻ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված 1-ին մաս 10-րդ կետ	1. Նախարարության անունը «բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության» բառերը փոխարինել «բարձր տեխնոլոգիական արդյունաբերության» նախարարություն:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդված	2. Օրենքի հավելվածի 16-րդ մասում «թվային» բառից առաջ լրացնել «ռազմարդյունաբերության, ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման, ռազմարդյունաբերական միջազգային համագործակցության իրականացման և զարգացման, ռադիոհաճախականությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների արդյունավետ օգտագործման և կառավարման, նորարարության ձևավորման խթանման, ինովացիոն և բարձր տեխնոլոգիաների,	Ընդունվել է	Ընդունվել է

			կիրճեռանվտանգության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և» բառերը:		
3	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	5-րդ հոդված	Հոդվածով առաջարկվող փոփոխություններում 10-րդ հոդվածի 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կառավարության նիստերը դռնբաց են՝ բացառությամբ վարչապետի հիմնավորված որոշմամբ նիստը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու դեպքերի:»:		Ընդունվել է հետևյալ խմբագրությամբ. «Կառավարության նիստերը դռնբաց են՝ բացառությամբ վարչապետի պատճառաբանված որոշմամբ նիստը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու դեպքերի:»:
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ (Կ-068 ⁴ -22.03.2019-ՊԻ-011/1)					
1	«Իմ քայլը» խմբակցություն	1-ին հոդված	Հոդված շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածում՝ 1) 3-րդ մասը «դեսպանի պաշտոնը,» բառերից հետո լրացնել «սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոնը,» բառերով, 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.1-ին մասով. «3.1. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոնը կարող է զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող, քսանհինգ տարին լրացած, հայերենին տիրապետող, ինչպես նաև առնվազն երկու օտար լեզվի իմացությամբ անձը:»:	Ընդունվել է	Ընդունվել է